1887. ՅՈՒՆԻՍԻ.

Այն ինչ 1887 թուի Յունիսի 25-ին Վեհափառ Ս. Մակար Կաթուղիկոսի օրհնութիւն և կոնդակն [1]) ստանալով դուրս եկայ Ս. Էջմիածնից 'ի Զամախի պաշտօնատեղիս գնալոյ, և տկարութեանս պատճառաւ 'ի Դիլիջան Յարութիւն քահանայի տանը ուշանալով՝ յուլիսի 15-ին հասայ Սաղիանի վանքը տկարութիւնս կազդուրելոյ համար։ Յուլիսի 20-ին հասայ Զամախի քաղաքը, և եկեղեցւոյ մէջ տեսնելով և օրհնելով ժողովրդեանը՝ Քրիստոսական ողջոյն տուեցի և Հայրապետական կոնդակը կարդացի. և 'ի դիմաց վեհափառ Հայրապետին օրհնութիւն մատուցանելով նոցա՝ հանդստացայ եկեղեցւոյ սենեակների մէջ, և ըսկսեցի գործս։ Երբ Սաղիանի վանքը հասայ, տեսի տաճարը կիսաշէն, և սենեակները կիսաւեր և ամայի և անմարդաբնակ՝ աւելի ևս տխրութիւն տիրեց ինձ՝ քան տկարութեանս տխրութիւնը. բայց տխրելուց աւելի սրտապնդեցի և մտքումս դրեցի, որ վանքի շինութիւնը աւարտեմ, և սենեակները նորոգելով, վանքը մարդաբնակ անեմ։ Աստուծոյ յաջողութեամբն և այս մտադրութեանս և ուխտադրութեանս վերայ հաստատ մնալով՝ գործին փոքր ինչ ծանօթանալուց զկնի՝ սկսեցի և Աստուած յաջողեց։

---

[1]) Այս կոնդակի պատճէնը գրուած է գրքիս 452 երեսում, Զամախւոյ ստորագրութեան մէջ։